վախեցաք. պատճառ այս է. որ զաքարիայն զՀրամանուցդ անունն, եւ զՀոգեւոր տէրին անունն ավաներուն դէմ յիշատակել։ Ասաք թէ կարապետէ երուսաղէմէ պիտի բերեմք. պարաթն այլ կարապետ վարդապետին անունն եղեւ, որպէս որ բազմայ լուեալ է։ Ինչ երկարեմք զբանն. յետ որ զՀրամանուցմէ թղտերն՝ որ եկաւ ի մեզ հասաւ նա կարդացաք շատ խնդումն եւ ուրախութիւն եղեւ մեզ։ Յետ նորա ժողովուրդն ի մեզ ասացին քահանայիցն. թէ դուք քահանայք է. դնացէք ձեր մէջն սիւնհոդոս արէք, տեսէք կանոնք եւ օրինք առաջնորդն զսվ որ այնէք, նա մենք այլ զայն ընդունիմք։ Քահանայքն որչափ որ կային. Զ. եկեղեցոյ ժողվեցան ի սուլու մանասարրու եկեղեցուն միաբան. Խ. Ծ. երեց. քննեցին վասն առաջնորդութեան համար. խօսք եղաւ. ասին թէ գրիգոր վարդապետն ըստամպօլու վըրայ է աւրհնուէր. կանոնք եւ օրինք. պարտ է մեզ զգրիգոր վարդապետն առաջնորդ ընդունել։ Եւ դարձեալ եկին քահանայք առ ժողովուրդն եւ ասին թէ ժողովուրդ մեզանէ ուզեցիք հոգեւոր առաջնորդ. ահա մենք կանոնք եւ օրինք բնական գրիգոր վարդապետն է մեր առաջնորդն. ահայ մենք ժողովուրդ ձեզի ծանուցաք դուք լաւ գիտէք։ Եւ ապա ասին ժողովուրդն ինչպէս անեմք. ահա պարաթն հանած է կարապետ վարդապետի անունն. յետոյ շէհրիյ շէլէպի. խոճայ սէֆէր. եւ խոճա գասպար, եւ այլ սիրելիք եւ բարեկամք. ասացին թէ ծերութեան ժամանակէ չէ պարտ այլ ազգաց դուռն որ երթայ. էվէլ պակաս խօսքներ լսէ վարդապետ- ահա անոր համար մնաց այսպէս կարապետ վարդապետի վըրան պարաթն։ Եւ դարձեալ ասին քո հրամանուցդ բարեկամքներն. թէ ասուած առաջնորդէ որ ինքն ի հոս գայ. նա անժամանակն կամք անէ հեշտ է պարաթն լինալու։ Ապա տէր վարդապետ այնպէս մի կարծեր որ